371
Հ-99

ՀՐԱՀԱՆԳ

ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

371
Հ-99

ԱԴՐԵՍԱՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ
1939 թ.

45.679

01. 2009

Հ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱՅ. Ս.Հ.Մ.Ռ.
Հ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ

3620
39

1 MAR 2010

ՀՐԱՄԱՆ

Ա.Գ.Ռ.ԽՍՀ-ի ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻ

№ 1188 9—ապրիլի 1939 թ.

ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

§ 1.

Հաստատել ԱդրԽՍՀ-ի տարրական, վոչ-լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցներում ստուգողական քննությունները անցկացնելու մասին կցված հրահանգը:

§ 2.

Նախ. ԱԽՍՀ-ի Լուսժողկոմատին, ԼՂԱ մարզի լուսբաժնին, Բաքլուսբաժնին արգելել ստուգողական քննությունների անցկացման տեղական հրահանգների հրատարակումը:

Ադրբեջանի ԽՍՀ-ի Լուսավորության ժողովրդական Կոմիսար

Մ. ՄԱՄԵԴՈՎ

ՀՐԱՀԱՆԳ

ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

§1. Տարեկան ստուգողական փոխադրման և ավարտման քննությունները անց են կացվում Ադր. ԽՍՀ-ի բոլոր դպրոցներում և հանդիսանում են աշակերտների գիտելիքների տարեկան յեզրափակիչ հաշվառման ձևը:

§2. Դպրոցներում ստուգողական քննությունները անց են կացվում նպատակ ունենալով հայտաբերել փաստական գիտելիքները և դրանք աշակերտների կողմից յուրացնելու կայունությունը, նրանց անցած ուսման դասընթացի սահմաններում, սահմանել աշակերտի պատրաստվածությունը՝ նրան վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցի բարձր դասարանում, տեխնիկումում կամ բարձրագույն ուսումնական հաստատությունում հաջողությամբ ուսուցանելու համար:

II. ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ԴՐԱՆՑ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

§3. Ստուգողական քննությունների յեն յենթարկվում բոլոր աշակերտները՝ նրանց դասարանից դասարան փոխադրելիս և դպրոցն ավարտելիս, բացառությամբ տարրական, վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների 1-ին, 2-րդ և 3-րդ դասարանների աշակերտների:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Դպրոցների սկզբնական դասարանների (1-ին, 2-րդ և 3-րդ) աշակերտների փոխադրումը կամ նրանց նույն դասարանում թողնելը կատարվում է աշակերտների գիտելիքների տարեկան գնահատականների (թվանշանների) հիման վրա:

§4. Ստուգողական քննությունների չեն թույլատրվում այն աշակերտները, վորոնք ըստ ուսումնական պլանի, հիմնական առարկաներից ունեն ավելի քան 3 վատ գնահատական (թվանշան): Այդ աշակերտները թողնվում են նույն դասարանում դասընթացը կրկնելու համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Դրանից բացառություն են կազմում միայն այն աշակերտները, որոնց անհառաջադիմությունն առաջ է յեկել հիվանդության, նուազության և ուրիշ հարգելի պատճառներով (որինակ՝ տեղափոխությունները)։ Մանկավարժական խորհրդի վորոշումով, այդ աշակերտների քննությունները վոխադրվում են աշնանը։

§5. Առողջությամբ առանձնապես թույլ աշակերտներին, վորոնք դրա մասին ունեն դպրոցական բժշկի յեզրակացությունը կամ պետական համապատասխան բուժհիմնարկության յեզրակացությունը, դպրոցի դիրեկտորը կարող է վոխադրել հեռակայք դասարանն առանց քննության, յեթե ուսումնական տարվա ընթացքում նրանք ըստ ուսումնական պլանի հիմնական առարկաներից ունեցել են «բավարար» գնահատականից (թվանշանից) վոչ ցածր հառաջադիմություն։

§ 6. Տարրական դպրոցի ամարտական 4-րդ դասարանների, վոչ լրիվ միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանների և միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանների աշակերտների քննությունները, գարնանային քննությունների ժամանակ աշակերտների հիվանդության դեպքում, դպրոցի մանկավարժական խորհրդի վորոշմամբ կարող են փոխադրվել աշնանը։ առանձին դեպքերում այդ աշակերտներն ուսումնական տարվա ընթացքում լավ առաջադիմության առկայությամբ, կարող են քննություններից բոլորովին ազատվել և չրջանային քաղաքային Լուսաբաժնի վարիչի թույլտվությամբ ավարտական ստանալ, ուսումնական տարվա բոլոր քառորդների համար ըստ տարեկան գնահատականների (թվանշանների) նրանց տալով համապատասխան վկայական կամ ատեստատ։

Նման բոլոր դեպքերի մասին, չրջանային – քաղաքային Լուսաբաժինների վարիչները պարտավոր են առանձնապես հայտնել Բաղլուսաբաժնի վարիչին, ԼՂԱ Մարզլուսաբաժնի վարիչին, Նախ. ՍՍՍՀ-ի և Ադր. ԽՍՀ-ի Լուսավորության ժողկոմներին։

§7. Տվյալ դասարանների համար քննությունների մեջ չմտցված առարկաներից վատ թվանշաններ ունեցող աշակերտները, գարնանային քննությունների ժամանակաշրջանում, այդ առարկաներից լրացուցիչ ստուգման են յենթարկվում։ Դպրոցների դիրեկտորներն ու վարիչները պարտավոր են քննությունների ցուցակի

մեջ դրա համար անհրաժեշտ ժամանակ հատկացնել։

§8. Քննություններն անց են կացվում հետևյալ առարկաներից և հետևյալ ժամկետներում։

4-րդ դասարաններում. (Տարրական դպրոցի համար – ավարտական) – մայրենի լեզվից (գրավոր և բանավոր), ռուսաց լեզվից (գրավոր և բանավոր), թվաբանությունից (գրավոր և բանավոր), աշխարհագրությունից և պատմությունից (բանավոր)։ ընդամենը 8 քննություն, դրանցից՝ 3 գրավոր և 5 բանավոր, մայիսի 20-ից մինչև հունիսի 5-ը ներառյալ – ընդամենը 17, որացույցային որ։

5-րդ դասարաններում. Մայրենի լեզվից (գրավոր և բանավոր), ռուսաց լեզվից (գրավոր և բանավոր), թվաբանությունից (գրավոր և բանավոր), աշխարհագրությունից (բանավոր)։ ընդամենը 7 քննություն։ դրանցից՝ 3 գրավոր և 4 բանավոր։ մայիսի 20-ից մինչև հունիսի 5-ը ներառյալ, – ընդամենը 17 որացույցային որ։

6-րդ դասարաններում. Մայրենի լեզվից (գրավոր և բանավոր), ռուսաց լեզվից (գրավոր և բանավոր), հանրահաշվից (գրավոր և բանավոր), բուսաբանությունից, աշխարհագրությունից (բանավոր)։ ընդամենը 8 քննություն, դրանցից՝ 3 գրավոր և 5 բանավոր, մայիսի 20-ից մինչև հունիսի 5-ը ներառյալ,-ընդամենը 17 որացույցային որ։

7-րդ դասարաններում. (Վոչ լրիվ միջնակարգ դպրոցի համար – ավարտական) – մայրենի լեզվից (գրավոր և բանավոր), գրական ընթերցանությունից (գրավոր և բանավոր), ռուսաց լեզվից (գրավոր և բանավոր), հանրահաշվից (գրավոր), տերկրաչափությունից, ԽՍՀՄ-ի Սահմանադրությունից, Ֆիզիկայից, կենդանաբանությունից, աշխարհագրությունից, ռուսաց լեզվից (բոլորը բանավոր)։ ընդամենը 13 քննություն, դրանցից՝ 4 գրավոր և 9 բանավոր, մայիսի 20-ից մինչև հունիսի 15-ը ներառյալ,-ընդամենը 27 որացույցային որ։

8-րդ դասարաններում. Մայրենի լեզվից (գրավոր թելադրություն), գրականությունից (գրավոր և բանավոր), ռուսաց լեզվից (գրավոր և բանավոր), հանրահաշվից (գրավոր և բանավոր), տերկրաչափությունից, մարդու անատոմիա-ֆիզիոլոգիայից, ռուսաց լեզվից (բոլորը

բանավոր)։ Ընդամենը 10 քննություն, դրանցից՝ 4 գրավոր և 6 բանավոր, մայիսի 20-ից մինչև հունիսի 12-ը, ընդամենը 24 որացույցային որ։

9-րդ դասարաններում։ Մայրենի լեզվից (գրավոր – թելադրություն), գրականությունից (գրավոր և բանավոր), ռուսաց լեզվից (գրավոր և բանավոր), յերկրաչափությունից (բանավոր), հանրահաշվից (գրավոր), յեռանկյունաչափությունից, Ֆիզիկայից, եվոլյուցիոն ուսմունքից, քիմիայից և աշխարհագրությունից (բոլորը բանավոր), ընդամենը 12 քննություն, դրանցից՝ 4-ը գրավոր և 8 բանավոր, մայիսի 20-ից մինչև հունիսի 15-ը ներառյալ, – ընդամենը 27 որացույցային որ։

10-րդ դասարաններում։ Մայրենի լեզվից (գրավոր – թելադրություն), գրականությունից (գրավոր և բանավոր), ռուսաց լեզվից (գրավոր և բանավոր), հանրահաշվից (գրավոր և բանավոր), յերկրաչափությունից (գրավոր և բանավոր), յեռանկյունաչափությունից, Ֆիզիկայից, քիմիայից, ԽՍՀՄ-ի ժողովուրդների պատմությունից, ռուսաց լեզվից (բոլորը բանավոր)։ Ընդամենը 14 քննություն, դրանցից՝ 5 գրավոր և 9 բանավոր, մայիսի 20-ից մինչև հունիսի 20-ը ներառյալ, – ընդամենը 32 որացույցային որ։

§9։ Քննությունների ժամանակ, գիտելիքների ստուգումն անց է կացվում Ադր. ԽՍՀ-ի Լուսժողկոմատի կողմից տվյալ դասարանի համար սահմանված ամբողջ ծրագրային նյութի ծավալով։

§10։ Այն դպրոցները, որտեղ ուսման որերևս առարկայի ամփոփումը հետ է մնում Ադր. ԽՍՀ-ի Լուսժողկոմատի սահմանած ծրագրից նրանց դիրեկտորներն ու վարիչները պարտավոր են ուսման չորրորդ քառորդի սկզբին այդ մասին հաղորդել շրջանային – քաղաքային Լուսբաժնի վարիչին։

Դպրոցների այդ հաղորդումների առթիվ շրջանային – քաղաքային Լուսբաժինների վարիչները պարտավոր են անձամբ, դպրոցի դիրեկտորի հետ մեկտեղ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել՝ ապահովելու ուսումնական ծրագրերի կատարումը դպրոցի կողմից, թույլատրելով միայն բացառիկ դեպքերում, յերբ դասարանը, չնայած ձեռք առած բոլոր միջոցներին, ուսման ծրագիրը լիովին չի կատարել, աշակերտների քննությունները կա-

տարել մինչև ուսման տարվա վերջը վաստակած անցած ծրագրային նյութերի ծավալով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Ծրագրային նյութն անցնելու գործում հետ մնալու դեպքում 10-րդ դասարանների աշակերտներին թուղարկելու թույլատվությունն անձամբ տալիս են ԱԴԸ. ԽՍՀ-ի Լուսավորության Ժողովրդական կոմիսարը կամ Նախ. ԱԽՍՀ-ի լուսավորության Ժողովրդական կոմիսարը և ԼՂԱ. մարզլուսաբաժնի ու բաղլուսաբաժնի վարիչները:

§ 11. Յուրաքանչյուր ուսուցիչ, վորի առարկան մտցված է քննությունների մեջ, պարտավոր է ապրիլի 25-ից վոչ ուշ, ուսման ծրագրի և դասագրքի հիման վրա ամեն մի դասարանի համար իր առարկայից կազմել քննությունների ծրագիր և ներկայացնել դպրոցի դիրեկտորի (վարիչի) հաստատմանը:

Խնդիրները (մաթեմատիկայից, ֆիզիկայից և քիմիայից), մաթեմատիկական ուրվանկները և քերականական տեքստերի վերլուծումը վորոնք տրվում են աշակերտներին քննությունների ժամանակ արդեն վում է մտցնել քննությունների ծրագրի

մեջ: Դրանք աշակերտներին են տրվում միայն քննությունների ժամանակ:

§12. Քննությունների ծրագիրը, հաստատված դպրոցի դիրեկտորի (վարիչի) կողմից, վոչ ուշ քան քննություններից 20 որ առաջ պետք է բացատրվի աշակերտներին:

§13. Բոլոր դասարաններում բանավոր քննությունները կատարվում են տոմսերով: Քննությունների համար տոմսերը պատրաստում է տվյալ առարկայի դասատուն, դժվարության միատեսակ. չափով, և քննությունների ժամանակ տալիս է աշակերտներին:

Յուրաքանչյուր տոմսը բաղկացած է քննությունների ծրագրի զանազան բաժիններից աշակերտների հասկանալու համար պարզ և ընթեռնելի գրված յերկու յերեք հարցից:

Յուրաքանչյուր առարկայի վերաբերյալ տոմսերի քանակը 30-40-ից ավել չը-պիտի լինի:

Ամբողջովին վերցրած բոլոր տոմսերի հարցերը պիտի ապառեն քննությունների ամբողջ ծրագիրը:

Քննության կանչված աշակերտը տոմսը վերցնում է անձամբ։ Եթե աշակերտը դժվարանում է վերցրած տոմսի մեջ տրված հարցին պատասխանել, նրան թույլատրվում է յերկրորդ տոմսը վերցնելու։

Անհրաժեշտ դեպքում, մասնավորապես յերբ աշակերտը դժվարանում է պատասխանել իր վերցրած տոմսում տրված հարցերին, ուսուցիչը կամ ասիստենտը կարող են լրացուցիչ հարցեր տալ աշակերտին՝ նրա փաստական գիտելիքները դրսևորելու նպատակով։

Այն տոմսը, վորով աշակերտը պատասխան է տվել, յերկրորդ անգամ դասարանի տվյալ խմբում չի ոգտագործվում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ։ — Դպրոցների 4-րդ, 5-րդ և 6-րդ դասարաններում, դպրոցի դիրեկտորի (վարիչի) հայեցողությամբ, աշակերտների քննությունները կարող են կատարվել նաև բանավոր (առանց տոմսերի) հարցաքվեությամբ։ Բանավոր հարցաքվեության ժամանակ արդելվում է գործածել «անհատական հարցաթերթիկներ», վորոնք նախորդ սահմանում են աշակերտի կողմից պատասխանելիք հարցերը։

§ 14։ Քննությունների ժամանակ գրավոր աշխատանքները մայրենի լեզվից 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ յեվ 10-րդ դասարաններում պետք է կայանան թելադրությունից, գրական ընթերցանությունից՝ 7-րդ դասարաններում — շարադրությունից, գրականությունից 8-րդ 9-րդ և 10-րդ դասարաններում շարադրություն գրականության թեմայից, ուսումնական տարվա ընթացքում անցած ծրագրային նյութի սահմաններում։ Շարադրության համար տրվում է յերեք թեմա, աշակերտներին իրավունք տալով ընտրելու դրանցից մեկն ու մեկը։

§15։ Քննությունների ժամանակ գրավոր աշխատանքները մաթեմատիկայից պետք է կայանան՝ 4-րդ, 5-րդ դասարաններում — թվաբանական մեկ խնդրից և յերկու որինակից։ 6-րդ դասարաններում հանրահաշվի յերեք որինակից, 7-րդ, 8-րդ և 9-րդ դասարաններում — հանրահաշվի մեկ խնդրից և յերկու որինակից։ 10-րդ դասարաններում հանրահաշվի մեկ խնդրից և յերկու որինակից, յերկրաչափության մեկ խնդրից յեռանկյունաչափության կիրառումով։ Խնդիրները և որինակները պետք

և տրվեն յերկու վարիանտով. դժվարության միատեսակ չափով:

§16. Թելադրության տեքստերը, գրականության չարադրության թեմաները, մաթեմատիկայից խնդիրները և օրինակները բոլոր դասարանների աշակերտների համար (բացառությամբ 10-րդ դասարանների և 7-րդ դասարանների-մատրեների լեզվից) յուրաքանչյուր ուսման առարկայի և դասարանի վերաբերյալ նախապատրաստում է նրա դասատուն և հաստատում է դպրոցի դիրեկտորը (վարիչը):

§17. Թելադրության տեքստերը քննությունների համար, գրականության չարադրության թեմաները, մաթեմատիկայի խնդիրներն ու օրինակները 10-րդ դասարանների և թելադրության տեքստերը 7-րդ դասարանների աշակերտների համար մշակվում են և հաստատվում անձամբ Ադր. ԽՍՀ-ի Լուսավորության Ժողովրդական Կոմիսարի, Նախ. ԱԽՍՀ-ի Լուսավորության Ժողովրդական Կոմիսարի, Բաղրատաշենի և ԼՂԱ. Մարզլուսաբաժնի վարիչների կողմից և հանձնվում են դպրոցների դիրեկտորներին՝ գրավոր քննություններից 2-3 որ առաջ:

Դպրոցների դիրեկտորներն այդ թեմաները դասատուներին հայտնում են միայն քննությունների որը:

§18. Աշակերտները բոլոր գրավոր աշխատանքները կատարում են դպրոցի վարչության կողմից նախորոք պատրաստած թղթի վրա, նշված տվյալ դպրոցի կնիքով:

§19. Ուսման այն առարկաներից, վորոնց նկատմամբ սահմանված են գրավոր և բանավոր քննություններ, առաջ կատարվում են գրավոր քննությունները: Աշակերտների գրավոր աշխատանքները ուսուցչի և ասիստենտի կողմից պետք է ստուգվեն, գնահատվեն և հանձնվեն դպրոցի դիրեկտորին՝ տվյալ առարկայի նկատմամբ, անպայման բանավոր քննություններն սկսելուց առաջ:

§20. Ստուգողական քննությունները դպրոցներում անց են կացվում դպրոցի դիրեկտորի (վարիչի) հաստատած ցուցակով:

Քննությունների ցուցակը պետք է դրվի դպրոցում փակցվի վոչ ուշ, քան ստուգողական քննություններն սկսելուց 10-որ առաջ:

362
30

Գոսպուգ.Գրադարան
ՀՍՍՀ-ՍՍՀ Ա.
Ս. Ա. Մաշտոցի

§21. Քննությունների ցուցակը կազմելիս պետք է ղեկավարվել հետևյալով.

ա) ԱԶՊՍՀ-ի բոլոր դպրոցներում քննությունները սկսվում են մայիսի 20-ից.

բ) Թույլատրվում է մի որում անցկացնել միայն մեկ քննություն բանավոր կամ գրավոր:

գ) Ցուրաքանչյուր գրավոր աշխատանքի համար հատկացվում է՝ 4-րդ դասարաններում—մեկ ժամ, 5-րդ—7-րդ դասարաններում — յերկու ժամից վոչ ավել, 8—10-րդ դասարաններում 3 ժամից վոչ ավել:

դ) Բանավոր քննությունների համար 4-րդ դասարանում հատկացվում է որական վոչ ավել քան 4 ուսումնական ժամ մեկ դասարանի համար, 5-7 -րդ դասարաններում - որական վոչ ավել քան 5 ուսումնական ժամ մեկ դասարանի համար, 8-րդ - 10-րդ դասարաններում որական վոչ ավել քան 6 ուսումնական ժամ մեկ դասարանի համար:

ե) Դասամիջոցները պարտադիր են յուրաքանչյուր ակադեմիական ժամից հետո, միայն բանավոր քննությունների ժամանակ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Քննությունները դասարանում մի առարկայից (բանավոր կամ գրավոր) պետք է վերջանա մի որում: Դասարանի աշակերտների քանակը չատ լինելու դեպքում, բանավոր քննություններն անցկացնելիս, թույլատրվում է դասարանը բաժանել յերկու մասի (որինակ՝ դասարանի կեսը քննությունները տալիս են առավոտյան ժամը 9-ից, իսկ մյուսը՝ ցերեկվա ժամը 1-ից):

§22. Ստուգողական քննություններն անց են կացվում սովորական դասարանային պայմաններում, տվյալ դասարանի բոլոր աշակերտների կամ դասարանի մի մասի ներկայությամբ, յեթե դասարանը բաժանված է խմբերի:

Քննություններն անցած աշակերտներին իրավունք է տրվում մնալ դասարանում կամ դուրս գալ դասամիջոցին: Գրավոր քննություն անցկացնելիս, աշակերտը, վորը կատարել է գրավոր աշխատանքը և հանձնել ուսուցչին, պարտավոր է թողնել այն դասարանը, վորտեղ քննությունն է տեղի ունենում:

§23. Ուսման առարկայի քննությունները անց է կացնում այն ուսուցիչը, որն այդ առարկան ավանդում է տվյալ դասարանում: Քննությանը, վորպես ասիստենտ, ներկա յե լինում նույն դպրոցի այդ առարկայի (կամ նման առարկայի) դասատուներից մեկը՝ դպրոցի դիրեկտորի նշանակումով: Ասիստենտն իրավունք ունի հարցեր տալու աշակերտներին և նրա գնահատականը (թվանշանը) ուսուցչի կողմից նկատի յե առնվում աշակերտի պատասխանները գնահատելիս:

III. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ 10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

§24. 10-րդ դասարաններում ավարտական քննություններն անց է կացնում հանձնաժողովը՝ դպրոցի դիրեկտորի նախագահությամբ և հետևյալ կազմով. տվյալ առարկան դասավանդող ուսուցիչը, դպրոցի դիրեկտորի նշանակած ասիստենտը և ժողովրդական կրթության համապատասխան բաժնի ներկայացուցիչը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — 1) Վորպես ժողովրդական կրթության բաժնի ներկայացուցիչ ներգրավում են պրոֆեսորները, համալսարանների, մանկավարժական և ուսուցչական ինստիտուտների դոցենտները, մանկավարժական ուսումնարանների դասատուները, դպրոցական տեսուչները:

2) Դպրոցի դիրեկտորը, մինչև քննությունները սկսելը, պարտավոր է հանձնաժողովի անդամներին ծանոթացնել ներկա հրահանգի հետ:

§25. Քննությունների ժամանակ 10-րդ դասարանների աշակերտների գրավոր աշխատանքների, նույնպես և նրանց բանավոր պատասխանների գնահատականը տալիս է հանձնաժողովը: Դպրոցի դիրեկտորի յեզրակացությունը վերջնական է հանդիսանում:

IV. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸՆ ՑԵՎ ԱՎԱՐՏՄԱՆ ՎԱՆՍԱՆՆԵՐԸ

§26. Աշակերտների փոխադրումը բարձր դասարանները կամ նրանց դպրոցն ավարտելը կարող է կատարվել միայն այն պայմանով, յեթե տարվա ընթացքում ուսման դասընթացի յուրաքանչյուր առարկայից աշակերտի հառաջադիմությունը «միջակ» թվանշանից ցած չի գնահատված:

ԹԱՆՈՒԹՅՈՒՆ· — Նկարչությունից, յերգեցողությունից և Ֆիզկուլտուրայից «մի՛ջակից» ցածր գնահատականները (թվանշանները) աշակերտին հետևյալ դասարանը փոխադրելու համար արգելք լինել չեն կարող:

§27· Քննությունների մեջ չմտցրված առարկաներից ընդհանուր տարեկան գնահատականը (թվանշանը) սահմանվում է ուսումնական տարվա բոլոր քառորդների ընթացքում: Քննությունների մեջ մտցրված առարկաներից ընդհանուր տարեկան գնահատականը (թվանշանը) սահմանվում է քննությունների ժամանակ ավելի առարկայից աշակերտների ստացած գնահատականների (թվանշանների) հիման վրա, հաշվի առնելով ուսումնական տարվա բոլոր քառորդների ընթացքում ստացած գնահատականները (թվանշանները):

Յուրաքանչյուր առարկայից ընդհանուր տարեկան գնահատականի (թվանշանի) հիման վրա, դպրոցի մանկավարժական խորհուրդը վճռում է աշակերտին հետևյալ դասարանը փոխադրելու կամ նրա կողմից դպրոցն ավարտելու հարցը:

§28· Ուսումնական տարին ավարտելուց աշակերտներին տրվում են.

ա) ՎԿԱՅԱԿԱՆ – տարրական կամ վոչ լրիվ միջնակարգ դպրոցն ավարտածներին:

բ) ԱՏՏԵՍՏԱՏ – միջնակարգ դպրոցն ավարտածներին, ըստ վորում նրանց, ովքեր հիմնական առարկաներից և վարքից ունեն, «գերազանց» թվանշաններ անկախ նկարչության, յերգեցողության և ֆիզկուլտուրայի գնահատականներից տրվում է հատուկ ատեստատ՝ նշելով, վոր նրանց իրավունք է վերապահվում բարձրագույն դպրոց մտնել առանց քննությունների:

§29· Այն աշակերտները, վորոնք բոլոր հիմնական առարկաներից ստացել են ընդհանուր – տարեկան «գերազանց» գնահատականներ (թվանշաններ), անկախ յերգեցողություն, նկարչություն և ֆիզկուլտուրա գնահատականներից (թվանշաններից) և վարքից «գերազանց» գնահատական ունեն, մանկավարժական խորհրդի վորոշումով պարգևատրվում են գովասանագրերով:

§30· Տարրական, վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցի աշակերտներին, վորոնք աշխան համար քննություններ են ստացել և այս կամ այն պատճառով ուրիշ դպրոց են փոխադրվում, դպրոցի դիրեկտորի կամ վարիչի կողմից այդ մասին տեղեկանք է տրվում:

V. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՍՈՒԴՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

§ 31· Աշնանային ստուգողական քննություններն ԱԳՐԽՍՀ-ի բոլոր դպրոցներում անց է կացվում ոգոստոսի 20-ից մինչև 27-ը ներառյալ, ամուր ցուցակով հաստատված դպրոցի դիրեկտորի կողմից և հայտարարված աշակերտներին մինչև նրանց ամառային արձակուրդներ տալը:

§ 32· Այն աշակերտները, վորոնք դարնան քննությունների առարկաներից յերեքից ավելի ընդհանուր տարեկան «վատ» կամ «շատ վատ» գնահատականներ (թվանշաններ) են ստացել, թողնվում են նույն դասարանում դասընթացը կրկնելու համար և աշնանային քննություններին չեն թույլատրվում:

§ 33· Այն աշակերտները, վորոնք աշնան կրկնակի քննություններից հետո հիմնական առարկաներից թեկուզ 4 մեկից վերջնական ընդհանուր հանրագումարային «վատ» կամ «շատ վատ» գնահատական (թվանշան) են ստացել, թողնվում են դասընթացը կրկնելու համար: Աշակերտների պայմանական փոխադրումներն արգելվում են:

§ 34· Գրավոր աշխատանքների տեքստերը, շարադրության թեմաները, խնդիրները և որինակները՝ աշնանային կրկնակի քննություններն անցկացնելու համար կազմում են համապատասխան ուսումնական դիսցիպլինների դասատուները և հաստատվում են դպրոցի դիրեկտորի կողմից:

Բանավոր քննությունների համար նյութ է ծառայում տվյալ առարկայից դարնան ստուգողական քննությունների ծրագիրը:

§ 35· Դպրոցների դիրեկտորները (վարիչները) պարտավորվում են ոգնություն ցույց տալ աշակերտներին աշնան քննություններին պատրաստվելու համար (դրպրոցական չենքեր տրամադրելը, խմբակային պարապմունքների կազմակերպումը և այլն):

Աշնանային կրկնակի քննություններ ըստացած յուրաքանչյուր աշակերտի նախապատրաստության համար կոնկրետ միջոցառումները նշվում են դպրոցի մանկավարժական խորհրդի յեզրափակիչ նիստում (այսինքն՝ դարնան քննությունները վերջանալիս):

§ 36· Մանկավարժական խորհրդի վորոշումը յուրաքանչյուր աշակերտի մասին

(յերկրորդ տարվան թողնելը, աշնան կըրկընակի քննութիւններ նշանակելը) դպրոցի դիրեկտորը անմիջապես հայտնում է ծնողների դիտութեան։

VI. ԱԴՐԽՍՀ ՎՈՉ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

§ 37. Ներկա հրահանգը վերաբերվում է բոլոր վոչ ադրբեջանական տարրական վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցներին, վորոնք գտնվում են ԱդրԽՍՀ-ի տերիտորիայում։

§ 38. ԱդրԽՍՀ բոլոր վոչ ադրբեջանական դպրոցների 4-րդ—10-րդ դասարաններում անցկացնել դրավոր և բանավոր քննութիւններ ադրբեջանցիներն լեզվից։

ԱդրԽՍՀ վոչ ադրբեջանական դպրոցներում ադրբեջանցիներն լեզվի քննութիւնները անց են կացվում վոչ ադրբեջանական դպրոցների ծրագրի հիման վրա, ԱդրԽՍՀ Լուսժողկոմատի 1938 թ. հաստատութեամբ։

§ 39. Քննութիւնների ժամանակ վոչ ադրբեջանական դպրոցներում ադրբեջանցիներն լեզվից կիրառվում են դրավորների հետևյալ տեսակները. 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ դասարաններում թելադրութիւն,

8-րդ, 9-րդ և 10-րդ դասարաններում — տրված պլանի համաձայն շարադրում, ըստ ուսումնական տարվա ընթացքում անցած ծրագրային նյութի սահմաններում, 10-րդ դասարանում բացի դրանից — թելադրութիւն։

§ 40. Վոչ ադրբեջանական դպրոցներում ադրբեջանցիներն լեզվից բանավոր քննութիւններն անց են կացվում հետևյալ ձևով. 4-րդ դասարանում ընթերցում. ընթերցած տեքստի հարցերի պատասխան. 5-րդ և 6-րդ դասարաններում ընթերցում, պատմում, քերականական վերլուծութիւն. 7-րդ դասարաններում ընթերցում, պատմում, քերականական վերլուծութիւն, հարցերի պատասխան քերականութիւնից և գրական ընթերցանութիւնից, 8-րդ, 9-րդ և 10-րդ դասարաններում հարցեր քերականութիւնից և գրական ընթերցանութիւնից։

VII. ԱԴՐԽՍՀ ՎՈՉ ՌՈՒՍԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՈՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

§ 41. Ռուսաց լեզվից վոչ ռուսական դպրոցներում անց են կացվում դրավորների հետևյալ տեսակները.

4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ դասարաններ-

բում — թելադրություն, 8-րդ, 9-րդ և 10-րդ դասարաններում չարադրում տրված պլանի համաձայն, տարվա ընթացքում գրականությունից անցած նյութերի հիման վրա, 10-րդ դասարանում բացի դրանից — թելադրություն:

§ 42. Բանավոր քննություն ռուսաց լեզվից անց են կացվում հետևյալ ձևով. 4-րդ դասարանում—ընթերցում, ընթերցած տեքստի շուրջը հարցերի պատասխան, 5-րդ և 6-րդ դասարաններում ընթերցում, պատմում, քերականական վերլուծություն, հարցերի պատասխաններ քերականությունից. 7-րդ դասարանում — ընթերցում, պատմում, քերականական վերլուծություն, հարցերի պատասխան քերականությունից և գրական ընթերցանությունից. 8-րդ, 9-րդ և 10-րդ դասարաններում— հարցեր քերականությունից և գրականությունից;

VIII. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

§ 43. Գարնան քննությունների ժամանակ աշակերտների կատարած գրավոր աշխատանքների բոլոր տեքստերը (թելադրությունները, չարադրությունները, խնդիրները, որինակները և այլն) անպայման պահվում են դպրոցում և դպրոցի դիրեկտորի (վարիչի) կողմից պետք է ներկայացվեն տեսչին՝ աշակերտների քննությունների անցկացման ճշտությունը նրա կողմից ստուգելիս:

§ 44. Քննություններն անցկացրած յուրաքանչյուր ուսուցիչ իր առարկայից քննությունները վերջանալու որը ճշտորեն լրացնում և դպրոցի դիրեկտորին և ներկայացնում քննությունների արձանագրությունը՝ յուրաքանչյուր աշակերտի դիտելիքների դնահատականներով (թվանշաններով) իր և իր ասսիստենտի ստորագրություններով (տես քննությունների արձանագրության ձևը):

§ 45. Ստուգողական վոխադրական և ավարտական քննությունների ընդհանուր հանրագումարները քննարկվում են դպրոցի մանկավարժական խորհրդի յեզրափակիչ նիստում:

§ 46. Կատեդորիկ կերպով արգելվում է պահանջել դպրոցների դիրեկտորներից (վարիչներից) ներկայացնելու քննությունների հանրագումարի մասին վորևե ստատիստիքական հաշվետվություն:

Ադրբեջանյան ԽՍՀ Լուսժողկոմատի տարրական և միջնակարգ դպրոցների վարչության պետ՝ Թ. ԽԱՍՄԱՄԵԴՈՎ.

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Դպրոցի գիրկակար .....

« ..... » ..... 1939 թ.

ՈՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

..... ԱՍԽՀ/մարզի ..... շրջանի

..... դպրոցի .....

դասարանում ..... քննությունների
(ամսական)

Ուսուցչի ազգանունը, անունը, հայրանունը .....

.....

Աշխատանքի ազգանունը, անունը, հայրանունը .....

.....

(10-րդ դասարանների համար—նաև հանձնաժողովի անդամների ազգանունները).

Համարները Ը.Կ	Աշակերտի ազգանունը անունը	(Գնահատականը (թվանշան)	Մանրամասնություն

Ուսուցիչ՝ .....

Աշխատանքի՝ .....

« ..... » ..... 1939 թ.

Հ.Ս.Ս. Ազգային գրադարան
Հանրապետ. Գրադարան
Publ. Library

Ազգային գրադարան
NL0231048

Сдано в производство 17/IV —39 г. Подписано к печати 24/IV 39 г. Количество печатных листов I. Печатных знаков—32250.
Главлит № 4045. Ст. 364 А—6. Заказ № 1451.
Типогр. „III Интернационал", Баку, ул. Саратовца Ефимова, 29. Тираж 600.

45.679

2 Г 1

571

НАРКОМПРОС АзССР

Инструкция о проведении проверочных испытаний в школах

Баку—1939 г.